№3

# Մենք հավասար ենք

Տեղեկատվական թերթիկ

Օգոստոս 2008

Unison

Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության
«Ունիսոն» հասարակական կազմակերպություն

## Կլոր սեղան Եղեգնաձորում

Հուլիսի 29-ին Եղեգնաձորում կայացավ «Հաշմանդամությունը Հայաստանում. իրավիճակի բարելավման հեռանկարներ» թեմայով քննարկում: Մասնակցում էին պետական մարմինների, ՀԿ-ների և ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ:

Բուռն բանավեճ ծավալվեց ներկայումս վերակառուցվող Մշակույթի տան մատչելիության ապահովման, հաշմանդամների զբաղվածության խթանման և քաղաքում առնվազն մեկ հարմարեցված սանհանգույցի կառուցման անհրաժեշտության շուրջ:

Կլոր սեղանի արդյունքում փորձի փոխանակումը և լուծումների համատեղ որոնումը կարող են նպաստել մարզում ապրող հաշմանդամների կյանքի բարելավմանը:

## Պրոֆեսոր Է.Շուհարդի գալարագիծը

Նա պառկած է՝ թաթերը վեր, անօգնական: Աչքերը փնտրում են կառչելու հնարավորություն: Մեծ և կարծր պատյանը պաշտպանում է նրան, բայց միևնույն ժամանակ սպանում: Շուրջը հավաքվել է հետաքրքրասերների հոծ բազմություն, բոլորը կարեկցում են, խորհուրդներ տալիս, օգնության ուղիներ փնտրում: Սա կտևի այնքան ժամանակ, մինչդեռ չի հայտնվի մեկը, ով նրան բնական դիրքի կվերադարձնի: Այդպիսին է կրիայի ճակատագիրը:

Աշխարհն ընդունակ է կտրուկ փոփոխման, և դու ես որոշում, թե ինչպես հարմարվել ստեղծված պայմաններին ապրել և վայելել կյանքը թե ատել ամենը և ամենքին, հաղթահարել ցավը թե ստիպել տանջվել քեզ շրջապատողներին, լինել օգտակար թե մոռացվել: Միայն քեզնից է կախված, ինչպես կընդունի քեզ հասարակությունը:

Վերլուծելով հազարից ավելի հաշմանդամների ճակատագրերը, այդ թվում իր սեփականը, էրիկա Շուհարդը մշակեց հաշմանդամ դարձած մարդու հոգեբանության և ինքնագիտակցության զարգացման որոշակի մոդել: Այն օգտակար կլինի ոչ միայն հաշմանդամներին և նրանց հարազատներին, այլ նաև վերականգնողական հաստատությունների աշխատակիցներին:

**Առաջին օղակ** - Հաշմանդամություն: Սթրես, ցավ և անօգնականություն, ժամանակի և տարածության կորստի զգացողություն: Նաև կատարվածի ընկալման անկարողություն:

**Երկրորդ օղակ** - Ինչո՞ւ ես, այլ ոչ մեկ ուրիշը: Կատարվածի, նոր կարգավիճակի և հնարավոր հետևանքների գիտակցման առաջին փորձ:

**Երրորդ օղակ** - Քան այսպես ապրել, լավ է մահանալ: Ագրեսիվ վերաբերմունք բոլորի նկատմամբ: Այնուհետև անհուսալիության և անտարբերության վիճակ: Հայտնվում են ինքնասպանության մասին մտքեր: Շատերը հաղթահարում են նման հոգեվիճակը ինքնուրույն, մյուսներին անհրաժեշտ է մասնագետի օգնություն:

**Չորրորդ օղակ** - Անելանելի թվացող իրավիճակից դուրս գալու փորձեր: Դիմում են հեքիմներին, բժիշկներին, Աստծուն: Թվում է, թե ելքը գտնված է, սակայն հույսը կապում են նախկին իրավիճակը վերադարձնելու հետ: Պետք է զգուշանալ նման հոգեվիճակից:

**Հինգերորդ օղակ** - Նորից հուսահատություն, իրավիճակը փոխելու բոլոր փորձերի անօգտակարության զգացողություն: Աշխատանքի և ընկերների կորուստ: Հնարավոր է ալկոհոլի կամ թմրանյութերի օգտագործում: Դա շատ վտանգավոր է: Այս օղակում մնում է հաշմանդամների շուրջ 2/3-ը: Մենությունը և շրջապատի զգոնության թուլացումը կարող են ունենալ տխուր հետևանքներ: Շատ կարևոր է հնարավորինս շուտ հանել մարդուն այս անցումային փուլից:

**Վեցերորդ օղակ** - Հնարավորությունների հստակ գնահատում առանց ավելորդ զգացմունքայնության: Ընդ որում, շատ կարևոր է ունենալ հստակ նպատակ և նախանշել դրան հասնելու իրական ուղիները: Օրինակ, ինքնուրույն մշակել որևէ հարմարանքի, պրոթեզի, սայլակի յուրահատուկ ձև, կամ ընդունվել համալսարան, գիրք գրել, ուսումնասիրել որևէ օտար լեզու, համակարգիչ և այլն:

**Յոթերորդ օղակ** - Կյանքը կրկին հիասքանչ է և հետաքրքիր: Սկսվում է վստահ ինքնահաստատման գործընթացը: Նպատակները դառնում են ավելի իրական և հասանելի: Կյանքը ձեռք է բերում ոչ միայն նոր իմաստ, այլ նաև հեռանկար՝ ստեղծված քո խելքի, ձեռքերի, տոկուն բնավորության շնորհիվ: Բայց սա չէ գագաթնակետը:

**Ութերորդ օղակ** - Հավասար հնարավորությունների և իրավունքների ձեռքբերում: Մասնակցություն հաշմանդամների ՀԿ-ների գործունեությանը և աջակցության տրամադրում բոլոր նրանց, ովքեր մնացել են գալարագծի ցածր օղակներում:

«Հաշմանդամը օգնում է հաշմանդամին» սկզբունքը թույլ է տալիս հասարակությանը հաջողության հասնել հաշմանդամների ինտեգրման գործում:

Հրապարակումն իրականացվում է Բաց Հասարակության Ինստիտուտի Օժանդակության Հիմնադրամի Հայաստանյան մասնաճյուղի և Նիդեռլանդների Կառավարության ֆինանսական միջոցներով

# Իրավաբանի անկյուն
## Հարց և պատասխան

**Լսել եմ, որ հաշմանդամ աշխատողներին փոխհատուցվում է իրենց աշխատավարձը: Արդյո՞ք ճիշտ է:**
**Պ.Մելիքյան, 37 տ., ք.Վեդի**

Նախ նշեմ, որ հաշմանդամի աշխատավարձը փոխհատուցվում է նրան աշխատանքի ընդունած գործատուին, ընդ որում փոխհատուցման ծրագրում անմրցունակ անձը, այդ թվում նաև հաշմանդամը, կարող է ընդգրկվել միայն մեկ անգամ:

Աշխատավարձի փոխհատուցման ծրագրի կարգն ու պայմանները սահմանված են ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի N 996-Ն «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման աջակցության նպատակով աշխատավարձի փոխհատուցման կարգը, չափը և պայմանները հաստատելու մասին» որոշմամբ: Աշխատանքի տեղավորված յուրաքանչյուր անմրցունակ անձի համար գործատուին տրվում է փոխհատուցում՝ գործատուի կողմից սահմանված աշխատավարձի 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափը: Բացի դրանից, աշխատավարձի փոխհատուցման ծրագրերը սահմանափակված են ժամկետով. փոխհատուցման ծրագրում ընդգրկված 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամների աշխատավարձերի փոխհատուցումը տրամադրվում է 2 տարի ժամկետով, իսկ անմրցունակ այլ անձանց՝ մեկ տարի ժամկետով: Աշխատավարձի փոխհատուցումը դադարեցվում է, երբ լրանում է փոխհատուցման ծրագրի ժամկետը, կամ գործատուի և անմրցունակ անձանց միջև կնքված աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում: Գործատուի և անմրցունակ անձանց միջև աշխատանքային պայմանագիրը կնքվում է գործատուի և տարածքային կենտրոնի միջև կնքված՝ աշխատավարձի փոխհատուցման մասին պայմանագրում նշված պայմաններով և գործողության ժամկետով:

Ըստ էության, գործատուն կնքում է երկու պայմանագիր. զբաղվածության տարածքային կենտրոնի հետ՝ աշխատավարձի փոխհատուցման մասին, անմրցունակ անձի կամ անձանց հետ՝ աշխատանքային պայմանագիր:

**Իզաբելլա Կարապետյան,**
**«Ունիսոն» ՀԿ իրավաբան**

# Մասնակցե՛ք հաշմանդամ կանանց գեղեցկության 4-րդ ֆոտոմրցույթին

2004թ.-ից «Ունիսոնը» անցկացնում է 16-40 տարեկան հաշմանդամ կանանց և աղջիկների գեղեցկության ամենամյա ֆոտոմրցույթ: Մրցույթի նպատակն է ապացուցել, որ իսկական գեղեցկությունը ոչ մի պարագայում չի խամրում: Տարեցտարի մասնակիցների թիվը ավելանում է, իսկ մրցանակաբաշխության արարողությունը ավելի հանդիսավոր բնույթ է կրում:

Ընտրությունը կատարում է Հայաստանում հեղինակություն վայելող գործիչներից կազմված ժյուրին: Տարբեր տարիներին ժյուրիի կազմում ընդգրկվել են Երվանդ Երզնկյանը, Մարտին Վարդազարյանը, Աշոտ Ղազարյանը, Ֆորշը, Ալեքսանդր Գրիգորյանը և այլ հանրահայտ մարդիկ:

Բացի հիմնական՝ «Միսս Գեղեցկություն» նոմինացիայից, սահմանվում են նաև այլ անվանակարգեր՝ «Միսս ժպիտ», «Միսս Նրբագեղություն», «Միսս Հմայք»... Լավագույն տասնյակում ընդգրկված մասնակիցները պարգևատրվում են մրցանակներով:

Արդեն ընդունվում են 2008թ. մրցույթի հայտերը: Մասնակցե՛ք ֆոտոմրցույթին, և միգուցե հենց դուք կարժանանաք գլխավոր մրցանակին և Միսս Գեղեցկություն - 2008 տիտղոսին:

Տեղեկությունների համար դիմեք (010) 52-21-70 հեռախոսահամարով:


**«Ունիսոն» հասարակական կազմակերպությունը**
**հաշմանդամներին անվճար տրամադրում է**

- զբաղվածության կենտրոնի ծառայություններ (ռեզյումեի կազմում, հարցազրույցին նախապատրաստում և այլն)
- իրավաբանական խորհրդատվություն
- հոգեբանական աջակցություն

Անցկացվում են նաև կերպարվեստի պարապմունքներ:

52-21-70

Նախագիծն իրականացվում է Բաց Հասարակության Ինստիտուտի և Նիդերլանդների Կառավարության ֆինանսական միջոցներով


# Միծեռնանի երաժիշտը դուրս է եկել կիթառահարների մրցույթի եզրափակիչ փուլ

Լոնդոնում կիթառահարների մրցույթի եզրափակիչ է դուրս եկել 22-ամյա Մարկ Փեյլը (Marc Playle), որի մոտ ի ծնե բացակայում է ձախ ձեռքը (մինչև արմունկը):

Փեյլը կիթառ նվագում է 14 տարեկանից, օգտագործելով ձեռքին ամրացված հատուկ սարք, որի ծայրին մեդիատոր է տեղադրված: Երաժշտական կրթությունը ստացել է Նյուքասլի քոլեջում:

Մրցույթին նա որոշեց մասնակցել մասնագիտական կատարելագործման նպատակով: Սկզբում մրցակիցները քսանն էին, և, Փեյլի խոստովանությամբ, հաղթելու հավանականությունը մեծ էր: Սակայն, երբ մրցույթի մասնակիցների թիվը կտրուկ աճեց, հասնելով 750-ի, Փեյլը կորցրեց եզրափակիչ փուլ հասնելու հույսը: Այնուամենայնիվ, նա ընդգրկվեց եզրափակչի լավագույն 12 երաժիշտների թվում:

Ներկայումս Մարկ Փեյլը «Մինիքին» խմբի կազմում պատրաստվում է ձայներիզ թողարկել:


Գլխավոր խմբագիր
**Արմեն Ալավերդյան**

Հրապարակումը պատրաստեցին
**Դավիթ Բաբայան**
**Մարիաննա Չալիկյան**
**Իզաբելլա Կարապետյան**



Հասցե՝ «Ունիսոն» ՀԿ, Երևան 0002, Դեմիրճյան 36
Հեռ./ֆաքս՝ (010) 52-21-70
Վեբ-կայք՝ www.unison.am
էլ. փոստ՝ unison@unison.am